**Արձանագրություն N 4**
**ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-19/3 ծածկագրով գրասենյակային նյութերի ձեռքբերման գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի**

ք. Երևան 22 ապրիլի 2019 թ.
ժամը 11:30

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Ղուկասյան
Հանձնաժողովի անդամներ՝ Հ. Բաղինյան
Լ. Խալաթովա
Շ. Իսախանյան
Ս. Զաքոյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Ն. Հարությունյան

## 1. ՀՀ պետական եկամուտների կոմիտե ներկայացված հարցման և յուրաքանչյուր չափաբաժնում առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից պահանջվող փաստաթղթերը ներկայացնելու մասին

(Տ.Ղուկասյան)

1.1 Ընդունել ի գիտություն, որ

- ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հարցում էր ուղարկվել ՀՀ պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ Կոմիտե) յուրաքանչյուր չափաբաժնում 1-ին տեղը զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ: Կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ստացվել է տեղեկատվություն համաձայն որի՝ մասնակիցները հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով չունեն ժամկետանց պարտավորություններ.

- ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-19/3 ծածկագրով գնման ընթացակարգի առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների կողմից սահմանված ժամկետում ներկայացվել են առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը՝ հրավերով պահանջվող փաստաթղթերի համաձայն:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

## 2. Գնանշման հարցման ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների հաստատման մասին

(Տ.Ղուկասյան)

2.1 Հիմք ընդունելով Օրենքի 34-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթները և գնահատող հանձնաժողովի կողմից հաստատված գնահատման թերթիկները գնահատող հանձնաժողովը որոշեց՝ հաստատել ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-19/3 ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների հայտերի գնահատման արդյունքները և գնման ընթացակարգի ներքոնշյալ չափաբաժիններում ընտրված մասնակից ճանաչել.

**չափաբաժիններ 1, 2, 3, 8, 9, 10, 11, 12, 13 և 14** - <<Սմարթլայն>> ՍՊԸ-ին,

**չափաբաժիններ 4 և 7** - <<ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ>> ՍՊԸ-ին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:*

## 3. Պետական գնման պայմանագիր կնքելու որոշում ընդունելու մասին

(Տ.Ղուկասյան)

3.1 Հիմք ընդունելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերը, ինչպես նաև սույն արձանագրության 2-րդ կետով ընդունված որոշումը, պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել արձանագրության 2.1 կետում նշված մասնակիցներին:

*Ընդունվել է որոշում՝ կողմ – 5, դեմ - 0:*

## 4. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին

(Տ.Ղուկասյան)

4.1 Հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել պետական գնման պայմանագրեր կնքելու օրվան հաջորդող աշխատանքային օրը՝ ժամը 11:30-ին ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գնումների կազմակերպման բաժնում (ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, IV հարկ, 460 սենյակ):

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ ---------- Տ. Ղուկասյան

Անդամ՝ ---------- Հ. Բաղինյան

---------- Լ. Խալաթովա

---------- Շ. Իսախանյան

---------- Ս. Զաքոյան

Արձանագրությունը կազմեց
հանձնաժողովի քարտուղար՝ ---------- Ն. Հարությունյան